ՓՈՓՈԽՎԱԾ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է
«ՀրազՋԷԿ» ԲԲԸ Կենտրոնական գնումային մարմնի
2026 թվականի ապրիլի 20-ի № 03-20.04.2026 արձանագրությամբ
և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը ՀՋ-ԳՀ-ՔԻՄ-2026

Պատվիրատուն՝ «ՀրազՋԷԿ» ԲԲԸ, որը գտնվում է ՀՀ, ք.Հրազդան, Գործարանային 1 հասցեում հայտարարում է ***գնանշման հարցում*** պայմանագիր կնքելու իրավունքով՝ քիմիկատների մատակարարման հետևյալ 2 չափաբաժիններով՝

- ***Չափաբաժին 1. Ծծմբական թթվի ձեռք բերում - 25 տոննա*** */տեխնիկական, ГОСТ 2184-74, վերահաշվարկված 100% կոնցենտրացիայի/*
- ***Չափաբաժին 2. Կաուստիկ սոդայի ձեռք բերում - 45 տոննա*** */տեխնիկական կծու նատրիում, ГОСТ 2263-79, վերահաշվարկված 100% կոնցենտրացիայի/*

Գնանշման հարցումը իրականացվում է 1 փուլով: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի սույն գնանշման հարցմանը մասնակցելու հավասար իրավունք:

Գնանշման հարցմանը մասնակցելու իրավունք չունեցող անձանց, ինչպես նաև մասնակիցներին ներկայացվող որակավորման չափանիշներն ու այդ չափանիշների գնահատման համար ներկայացվելիք փաստաթղթերը սահմանված են սույն ընթացակարգի հրավերով:

Ընտրված Մասնակիցը որոշվում է ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

Սույն ընթացակարգին մասնակցության հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ, ք.Հրազդան, Գործարանային 1 հասցեով, փաստաթղթային տեսքով կամ էլեկտրոնային ձևով՝ էլ. փոստ info@raztes.am մինչև **2026թ. ապրիլի 29-ը ժամը 11.00**:

Հայտերի բացումը տեղի կունենա ՀՀ, ք.Հրազդան, Գործարանային 1 հասցեում, **2026թ. ապրիլի 29-ին ժամը 11:00-ին:**

Սույն ընթացակարգի վերաբերյալ բողոքարկումն իրականացվում է «ՀրազՋԷԿ» ԲԲԸ ապրանքների, աշխատանքների, ծառայությունների կանոնակարգված գնումների իրականացման կանոնակարգով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել Կենտրոնական գնումային մարմնի քարտուղար՝ Էդիտա Ավետիսյանին:
Հեռախոս +374 93 900 652:
Էլ. փոստ info@raztes.am

Հաստատված է
ՀՋ-ԳՀ-ՔԻՄ-2026 *ծածկագրով*
ընթացակարգի հանձնաժողովի
2026 թվականի *ապրիլի 20-ի № 03-20.04.2026* արձանագրությամբ

Հ Ր Ա Վ Ե Ր

« ՀրազՋԷԿ» ԲԲ Ընկերության կարիքների համար՝ քիմիկատների մատակարարում

1. Ընդհանուր դրույթներ.

1.1. Առաջարկների հարցման վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ.

Պատվիրատուն՝ «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ն (Հայաստանի Հանրապետություն, ք. Հրազդան, Գործարանային 1, հեռախոս՝ +223 60712, e-mail: info@raztes.am), 2026թ.-ի ապրիլի 21-ին info@raztes.am և «Գնումների մասին» օրենքով նախատեսված հրապարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով գործող ինտերնետային կայքում (procurement.am) հրապարակված՝ գնանշման հարցման անցկացման մասին ծանուցումով, հրավիրում է իրավաբանական և ֆիզիկական անձանց (այսուհետև՝ «Մասնակիցներ») մասնակցել գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ «գնանշման հարցում») Պատվիրատուի կարիքների համար՝ քիմիկատների մատակարարման (այսուհետև՝ «Մատակարարում») հետևյալ 2 չափաբաժիններով՝

- ***Չափաբաժին 1. Ծծմբական թթվի ձեռք բերում - 25 տոննա*** */տեխնիկական, ГОСТ 2184-74, վերահաշվարկված 100% կոնցենտրացիայի/*
- ***Չափաբաժին 2. Կաուստիկ սոդայի ձեռք բերում - 45 տոննա*** */տեխնիկական կծու նատրիում, ГОСТ 2263-79, վերահաշվարկված 100% կոնցենտրացիայի/*

Գնման առարկայի բնութագիրը շարադրված է № 1 Հավելվածում:

Պայմանագրի նախագիծը, որը կկնքվի սույն առաջարկների հարցման արդյունքներով, ներկայացված է № 2 Հավելվածում: Պայմանագրի նախագծի ոչ էական պայմանները կարող են փոփոխվել կողմերի համաձայնությամբ:

Հավելված 1

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Ծծմբական թթու (H_2SO_4)

Չափաբաժին 1

1. Արտադրանքի անվանումը

Ծծմբական թթու (ծանր քիմիական հեղուկ՝ H_2SO_4) /տեխնիկական, ГОСТ 2184-74, վերահաշվարկված 100% կոնցենտրացիայի/

2. Նպատակային կիրառում

Ծծմբական թթուն նախատեսված է արդյունաբերական, լաբորատոր, մետալուրգիական, մաքրման, ջրազրման, քիմիական սինթեզի և այլ տեխնիկական գործընթացների համար:

3. Քիմիական հատկություններ

Պարամետր	*Ցուցանիշ*
Քիմիական բանաձև	*H_2SO_4*
Մոլեկուլային զանգված	*98.08 գ/մոլ*
Հարկավոր կոնցենտրացիա	*≥ 92% կամ ≥ 96% (ըստ պահանջի)*
Տեսք	*Թափանցիկ, անգույն կամ դեղնավուն հեղուկ*
Հոտ	*Սուր, խիստ հոտ*
Հատուկ կշիռ	*~1.84 գ/սմ³ (100% թթու դեպքում)*
pH	*<1*
Օքսիդացման աստիճան	*+6*

4. Որակական պահանջներ

- Մաքրություն՝ ≥ 92% կամ ≥ 96%

- Թունավոր նյութերի պարունակությունը՝ ≤ թույլատրելի սահմանները

- Հատուկ կշիռը պետք է համապատասխանեցվի պահանջված կոնցենտրացիային

- Չպարունակի մեխանիկական խառնուրդներ կամ նստվածք

- Պահանջվող վկայագրերը՝ արտադրության և անալիզի

5. Փաթեթավորում և տեղափոխում

- Փակ տրանսպորտային միջոցներով /ցիստեռն/

6. Տրանսպորտավորում

- Համապատասխան ADR (Եվրոպական համաձայնագիր՝ վտանգավոր բեռների միջազգային ճանապարհային փոխադրումների համար)

- Բեռնափոխադրում միայն հատուկ լիցենզավորված փոխադրողների կողմից

- Մատակարարման ժամկետ՝ ըստ պայմանագրի

7. Լրացուցիչ պահանջներ

- Արտադրողի վկայական (Certificate of Analysis - COA)

- Սերտիֆիկացում՝ ըստ ISO կամ GOST ստանդարտների

- Հնարավորություն՝ նախնական նմուշի տրամադրման (5 լ)

- Պայմանագրով սահմանված որակի երաշխիք

Տեխնիկական ծծմբական թթուն օգտագործվում է կատիոնիտային I, II աստիճանի զտիչների և ԽՏՋ տիպի զտիչների ռեգեներացիայի համար:

Անգույն հեղուկ է, թույլատրելի 92,5-98%-ը: Ծծմբական թթուն H2SO4 2-րդ կարգի վտանգավորության աստիճանի է:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ
Կաուստիկ սոդա (Նատրիումի հիդրոքսիդ — NaOH)
Չափաբաժին 2

1. Արտադրանքի անվանումը
Կաուստիկ սոդա (Նատրիումի հիդրոքսիդ — NaOH)
2. Նպատակային կիրառում
Նատրիումի հիդրոքսիդը (կաուստիկ սոդա) նախատեսված է արդյունաբերական, մաքրման, ջրազրման, թղթարտադրության, սաբունի արտադրության, քիմիական գործընթացների և լաբորատոր պայմաններում կիրառման համար:
3. Քիմիական հատկություններ

Պարամետր	Ցուցանիշ
Քիմիական բանաձև	NaOH
Մոլեկուլային զանգված	39.997 գ/մոլ
Կոնցենտրացիա	≥ 98.5% չոր նատրիումի հիդրոքսիդի դեպքում
Տեսք	Հեղուկ վիճակում
Հոտ	Անհոտ
Հալման ջերմաստիճան	318 °C
Եռման ջերմաստիճան	1388 °C
Հատուկ կշիռ	~2.13 գ/սմ³
pH (1% լուծույթում)	~13.5

4. Որակական պահանջներ
- Մաքրություն՝ ≥ 98.5%
- Չպարունակի օտար նյութեր, նստվածք կամ խոնավություն
- Պահանջվող վկայագրեր՝ COA, SDS (անվտանգության տեղեկագիր)
- Համապատասխանություն՝ GOST 2263 կամ համարժեք ISO ստանդարտներին
5. Փաթեթավորում և տեղափոխում
- Փակ տրանսպորտային միջոցներով /ցիստեռն/
6. Տրանսպորտավորում
- Տեղափոխում՝ փակ տրանսպորտային միջոցներով IBC կոնտեյներ, 1000լ
- Համապատասխան ADR կանոններին՝ վտանգավոր նյութերի համար
- Լիցենզավորված փոխադրող, անհրաժեշտության դեպքում՝ անվտանգության ուղեկցմամբ
7. Լրացուցիչ պահանջներ
- Վկայական՝ արտադրողի կողմից՝ յուրաքանչյուր խմբաքանակի համար
- Նմուշի տրամադրում՝ նախքան հիմնական առաքումը (500 գ)
- Երաշխիքային պահման ժամկետ՝ նվազագույնը 1 տարի
- Պայմանագրով սահմանված տեխնիկական համապատասխանության երաշխիք
Տեխնիկական կծու նատրիումը NaOH օգտագործվում է անիոնիտային I, II աստիճանի զտիչների և ԽՏՋ տիպի զտիչների ռեգեներացիայի համար: Անգույն հեղուկ է, թույլատրելի 42-46%-ը: Կծու նատրիումը NaOH 2-րդ կարգի վտանգավորության աստիճանի է:

Հ/Հ	*Ապրանքի անվանում , նախընտրելի տիպ*	*Չափ. միավոր*	*Քանակ*	*Տեխնիկական բնութագիր*
Չափաբաժին 1	**Ծծմբական թթու** /տեխնիկական, ГОСТ 2184-74, վերահաշվարկված 100% կոնցենտրացիայի. հեղուկ/	տ	25	ԳՕՍՏ *2184-74*
Չափաբաժին 2	**Կաուստիկ սոդա** /տեխնիկական կծու նատրիում, ГОСТ 2263-79, վերահաշվարկված 100% կոնցենտրացիայի, հեղուկ/	տ	45	ԳՕՍՏ *2263-79*

1.2. Փաստաթղթերի իրավական կարգավիճակը.

1.2.1. Մասնակցի հայտը ունի օֆերտայի իրավական կարգավիճակ և կդիտարկվի այդպիսին Պատվիրատուի կողմից:

1.2.2. Հաղթողների հետ կնքվող պայմանագրի պայմանները սահմանելիս օգտագործվում են հետևյալ փաստաթղթերը՝

- Գնանշման հարցման արդյունքերի մասին արձանագրությունը,
- Գնանշման հարցում անցկացնելու մասին Հայտարարությունը և սույն գնանշման հարցման փաստաթղթերը՝ բոլոր լրացումներով և պարզաբանումներով,
- Հաղթողների հայտերը՝ բոլոր լրացումներով և պարզաբանումներով:

1.3. Այլ դրույթներ.

1.3.1. Մասնակիցն ինքնուրույն է կրում հայտի պատրաստման և ներկայացման հետ կապված բոլոր ծախսերը:

1.3.2. Պատվիրատուն ապահովում է Մասնակիցների կողմից տրամադրված բոլոր տեղեկությունների գաղտնիությունը:

1.3.3. Մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Սույն մասը կարող է կիրառվել, եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը,

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

1.3.4. Պատվիրատուն պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակներում:

1. **Գնանշման հարցման անցկացման կարգ.**

2.1. Գնանշման հարցումը անցկացվում է հետևյալ կարգով.

2.1.1. Գնանշման հարցումը անցկացնելու մասին հայտարարության և հրավերի հրապարակում:

2.1.2. Պատվիրատուի կողմից գնանշման հարցման փաստաթղթերի պարզաբանում՝ անհրաժեշտության դեպքում:

2.1.3. Հայտի պատրաստում:

2.1.4. Հայտերով ծրարների բացում:
2.1.5. Հայտերի գնահատում:
2.1.6. Գնանշման հարցման Հաղթողի ընտրություն:
2.1.7. Գնանշման հարցման արդյունքերի մասին Արձանագրության ստորագրում:
2.1.8. պայմանագրի ստորագրում:
2.1.9. Գնանշման հարցման մասնակիցների տեղեկացում Գնանշման հարցման արդյունքերի մասին:

2.2. Հայտը պատրաստելու կարգը: Հայտերին ներկայացվող ընդհանուր պահանջներ.

Մասնակիցը պետք է պատրաստի հայտը, որը ներառում է սույն փաստաթղթերում բերված հրահանգներին և ձևին համապատասխան՝

2.2.1. Դիմում-հայտարարություն (Ձև 1),
2.2.2. Նկարագիր՝ առաջարկվող ապրանքի տեխնիկական պահանջներին համապատասխան (Ձև 2),
2.2.3. Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր (Ձև 3.1 , Ձև 3.2):

Ձև 3.1 հայտարարագիրը ներկայացվում է ՀՀ ռեզեդենտ չհանդիսացող Մասնակիցը.

Ձև 3.2 հայտարարագիրը ներկայացվում է ՀՀ ռեզիդենտ հանդիսացող Մասնակիցը.

Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր չի ներկայացվում, եթե Մասնակիցը անհատ ձեռնարկատեր կամ ֆիզիկական անձ է:

2.2.4. Գնային առաջարկ Ձև 4 (Հայտով ներկայացվող առաջարկված գինը նշվում է ՀՀ դրամով՝ թվերով և տառերով ու ներառում է հաշվարկման կարգը: Հայտով նարկայացվող առաջարկված գնի հաշվարկը պետք է ներառի հայտատուի բոլոր ծախսերը, ներառյալ փոխադրումը Պատվիրատուի տարածք:)

2.2.5. Փաստաթղթերի պարզաբանումներ.

ա) Մասնակիցներն իրավունք ունեն դիմել Պատվիրատուին սույն նախնական ընտրության փաստաթղթերի պարզաբանման համար: Պատվիրատուն պարտավորվում է խելամիտ ժամկետում պատասխանել ցանկացած հարցի, որը նա կստանա հայտերի ընդունման վերջնաժամկետի լրանալուց ոչ պակաս, քան 3 օր առաջ:

բ) Մասնակիցն իրավունք ունի ներկայացնել միայն մեկ հայտ: Սույն պահանջի խախտման դեպքում նման Մասնակցի բոլոր հայտերը մերժվում են՝ առանց ըստ էության դիտարկման:

գ) Հայտում ընդգրկված յուրաքանչյուր փաստաթուղթ պետք է ստորագրված լինի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան Մասնակցի անունից առանց լիազորագրի գործելու իրավունք ունեցող անձի կողմից կամ նրա կողմից պատշաճ ձևով տրված լիազորագրի հիման վրա գործող լիազորված անձի կողմից (այսուհետև՝ «Լիազորված անձ»): Վերջին դեպքում լիազորագրի բնօրինակը կցվում է հայտին:

դ) Հայտի բոլոր էջերը պետք է լինեն համարակալված:

Հայտում կատարված ոչ մի ուղղում չունի ուժ, բացառությամբ այն ուղղումների, որոնք հաստատված են ձեռագիր մակագրությամբ «հավատալ ուղղումին» և յուրաքանչյուր ուղղման կողքը դրված լիազոր անձի անձնական ստորագրությամբ:

ե) Մասնակիցը, ի թիվս այլ պահանջվող փաստաթղթերի և տեղեկատվության, ներկայացնում է իր կողմից հաստատված ցանկ՝ հանրային կազմակերպության հետ փոխկապակցված բոլոր անձանց վերաբերյալ՝ նշելով յուրաքանչյուր անձի հետ փոխկապակցվածության ձևը և տեսակը: Այն դեպքում, երբ մոնիթորինգի կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրտուն

միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է: Սույն կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում Պատվիրտուն այդ մասին ծանուցում է իրավապահ մարմիններին՝ վերջիններիս և պայմանագիր կնքած մասնակցին ներկայացնելով հիմքերը:

զ) Արգելվում է գնումների մասին օրենսդրությամբ սահմանված փոխկապակցված անձանց միաժամանակյա մասնակցությունը Հանրային կազմակերպության կողմից կազմակերպված գնման միևնույն գործընթացին՝ բացառությամբ գնումների մասին օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

2. Հայտերի ներկայացումը և դրանց ընդունումը.

3.1. Մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձում է այն ներկայացնողը: Ծրարում ներառված փաստաթղթերը, կազմվում են բնօրինակից / և **1 /մեկ/ օրինակ պատճենից**: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Հայտում ներառվող բնօրինակ փաստաթղթերի փոխարեն կարող են ներկայացվել դրանց նոտարական կարգով վավերացված օրինակները:

Ծրարը և սույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

3.2. Սույն հրահանգի 3.1 կետում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են՝

1) Պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).

2) ընթացակարգի ծածկագիրը.

3) «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը.

4) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

3.3. Սույն հրահանգի 3.1 և 3.2 կետերի պահանջներին չհամապատասխանող հայտերը Կենտրոնական գնումային մարմինը (այսուհետ՝ Հանձնաժողով) հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

3.3.1. Այդ ընթացակարգին կարող են մասնակցել Մասնակիցների ներկայացուցիչները, որոնք ժամանակին ներկայացրել են հայտերը:

3.3.2. Բացման ընթացակարգի ընթացքում Հանձնաժողովը վարում է համապատասխան արձանագրություն, որում արտացոլված է Հանձնաժողովի կողմից հրապարակված ողջ տեղեկատվությունը:

3.4. Հայտերի գնահատում.

3.4.1. Ընդհանուր դրույթներ.

Հայտերի գնահատումը կատարվում է Հանձնաժողովի և վերջինիս կողմից ներգրավված այլ անձանց (փորձագետների և մասնագետների) կողմից:

3.4.2. Ընտրական փուլ

Ընտրական փուլի շրջանակներում Հանձնաժողովը ստուգում է՝

ա) Հայտերի ձևակերպման ճշտությունը և դրանց ըստ էության համապատասխանումը սույն փաստաթղթերի պահանջներին,

բ) Մասնակիցների համապատասխանությունը սույն փաստաթղթերի պահանջներին (իրավունակությունը, որակավորումը),
գ) առաջարկվող ծառայությունների համապատասխանությունը սույն փաստաթղթերին,
դ) առաջարկվող պայմանագրային պայմանների համապատասխանությունը սույն փաստաթղթերի պահանջներին:
Ընտրական փուլի շրջանակներում Հանձնաժողովը կարող է Մասնակիցներից պահանջել իրենց հայտերի վերաբերյալ բացատրություններ կամ լրացումներ, այդ թվում բացակայող պարզաբանող փաստաթղթերի ներկայացում: Ընդ որում, Հանձնաժողովը իրավունք չունի պահանջել բացատրություններ կամ լրացումներ, որոնք փոխում են հայտի էությունը:
Հայտերի ձևակերպման ճշտությունը ստուգելիս, Հանձնաժողովը իրավունք ունի ուշադրություն չդարձնել մանր թերությունների և վրիպումների վրա, որոնք չեն ազդում հայտի էության վրա: Հանձնաժողովը՝ Մասնակցի գրավոր համաձայնության դեպքում կարող է նաև ուղղել ակնհայտ թվաբանական և ուղղագրական սխալները (ողղումների վրա ստորագրել):
Ընտրական փուլի արդյունքներով Հանձնաժողովը մերժում է հայտերը, որոնք՝
ա) ըստ էության չեն համապատասխանում ձևակերպմանը սույն փաստաթղթերով ներկայացվող պահանջներին,
բ) ներկայացված են Մասնակիցների կողմից, որոնք չեն համապատասխանում սույն փաստաթղթերի պահանջներին,
գ) ներկայացված են Մասնակիցների կողմից, որոնք չեն ներկայացրել սույն փաստաթղթերով պահանջվող փաստաթղթերը կամ ներկայացված փաստաթղթերում կան Մասնակցի մասին անարժանահավատ կամ թերի տեղեկություններ,
դ) ներառում է առաջարկություններ, որոնք չեն համապատասխանում սույն փաստաթղթերով սահմանված պայմաններին,
ե) ներկայացվել են Մասնակիցների կողմից, որոնք չեն համաձայնվել Հանձնաժողովի առաջարկի՝ իրենց հայտերում առկա ակնհայտ թվաբանական և ուղղագրական սխալները ուղղելու հետ:
3.5. Գնանշման հարցման հաղթողի որոշում
3.5.1. Հանձնաժողովը իր նիստում որոշում է հաղթողին, որպես Պատվիրատուի պահանջների համապատասխանող Մասնակից:
3.5.2. Հանձնաժողովի որոշումը հաղթողին որոշելու մասին ձևակերպվում է հանձնաժողվի նիստի արձանագրությամբ:
3.6. **Պայմանագրի ստորագրում**.
3.6.1. Պատվիրատուի և Հաղթողների միջև պայմանագիրը ստորագրվում է հայտերի գնահատման , արձանագրության հիման վրա՝ 10 օարցուցային օրվա ընթացքում:
3.7. Գնանշման հարցման արդյունքների մասին ծանուցումը.
Պատվիրատուն իր պաշտոնական կայքում և «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված հրապարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով գործող ինտերնետային կայքում հրապարակում է գնանշման հարցման արդյունքների մասին կամ այն մասին, որ գնանշման հարցումն չի կայացել (գնման գործընթացի հայտերի բացման և/կամ գնահատման նիստերի արձանագրությունները)՝ նիստին հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում:
4. Հայտերի փոփոխությունները և ետ կանչումը.
4.1. Մասնակիցը իրավունք ունի փոփոխել կամ ետ կանչել ներկայացված հայտը պայմանով, որ նրա համապատասխան գրավոր դիմումը կստացվի Պատվիրատուի կողմից մինչև հայտերի ընդունման ժամկետի ավարտը:

4.2. Գնանշման հարցման հայտի փոփոխության դեպքում Մասնակիցը պետք է պատրաստի հետևյալ փաստաթղթերը՝

ա) դիմում Պատվիրատուին՝ Մասնակցի ձևաթղթի վրա հայտում փոփոխություն կատարելու խնդրանքով,

բ) փոփոխվող փաստաթղթերի նոր տարբերակները (խմբագրությունները):

4.3. Հայտի հետ կանչման դեպքում Մասնակիցը Պատվիրատուին իր ձևաթղթի վրա ուղարկում է համապատասխան դիմում:

4.3.1. Հայտի փոփոխության կամ հետ կանչման մասին դիմումը՝ կցվող բոլոր փաստաթղթերով և դրանց կրկնօրինակներով, պետք է կնքված լինեն ծրարներում, որոնք ձևակերպված են 3.1., 3.2. կետերին համապատասխան: Ընդ որում, արտաքին ծրարի վրա անհրաժեշտ է լրացուցիչ նշագրել «Գնանշման հարցման հայտի փոփոխություններ» կամ «Գնանշման հարցման հայտի հետ կանչում»:

4.3.2. Գնանշման հարցման ընդունված ծրարների բացման ընթացակարգի ժամանակ ծրարները՝ դրոշմված որպես «Գնանշման հարցման հայտի հետ կանչում» չեն ներկայացվում, այսինքն՝ չեն դիտարկվում: Առաջին հերթին բացվում են «Գնանշման հարցման հայտի փոփոխություն» նշագրված ծրարները: Հետո բացվում են մնացած բոլոր ծրարները:

5. **Վերասակարկություն**.

5.1. Վերասակարկությունը կիրառվում է ուղղված գնման Մասնակիցների գնմանը մասնակցելու իրենց հայտերում նշված գների կամավոր իջեցմանը՝ Պատվիրատուի համար գնման մասնակցության հայտի նախընտրելիությունը բարձրացնելու նպատակով: Ընդ որում «բերված գին» կամ «տնօրինման արժեք» չափորոշիչների կիրառմամբ գնման մասնակցության հայտերի գնահատման պարագայում գնման Մասնակիցը իրավունք ունի բարելավել նշված չափորոշիչները կազմող յուրաքանչյուր ցուցանիշ:

6. Հայտերի բացումը

6.1. Հայտերը կբացվեն 2026թ. ապրիլի 29-ին ժամը 11:00-ին նշանակված նիստում, ըստ հայտերի գրանցամատյանի հերթականության, հասցեն՝ ք. Հրազդան, 2302, Գործարանային 1:

Հավելված 2

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № ……

ք. Հրազդան *«____ »_____ 202 թ.*

«Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերությունը (*ՀՎՀՀ՝ 03015742, գրանցման համար՝ 33.130.01678, հասցե՝ ք. Հրազդան, Գործարանային 1, այսուհետ՝ **«Գնորդ»**)*՝ ի դեմս Գլխավոր տնօրեն Ս. Կարայանի, ով գործում է Գնորդի Կանոնադրության հիման վրա, մի կողմից, և

…… (*գրանցման համար՝ ……, գրանցման ամսաթիվ՝ ……թ., ՀՎՀՀ՝ ……, հասցե՝ ՀՀ, ք.…… ……,* այսուհետ՝ ***«Մատակարար»***)՝ ի

դեմս տնօրեն ……, ով գործում է Մատակարարի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից,

հետագա շարադրանքում միասին անվանվելով ***«Կողմեր»***, իսկ յուրաքանչյուրն առանձին՝ ***«Կողմ»***, Գնորդի գնահատող հանձնաժողովի ……թ. № …… արձանագրության հիման վրա և համաձայն Հայաստանի Հանրապետության «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ «***Պայմանագիր***») հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Մատակարարը պարտավորվում է սույն Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի № 1 Հավելվածով (այսուհետ՝ ***«Հավելված»***) նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ***«Ապրանք»***), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այն և վճարել դրա դիմաց՝ սույն Պայմանագրի 4-րդ բաժնով սահմանված չափով և կարգով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. **Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1. Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Մատակարարի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 (տասնհինգ) աշխատանքային օրից ավելի:

2.1.2. Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին և Ապրանքի հետ ներկայացված որակի անձնագրին չհամապատասխանող Ապրանք՝

1. պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը,
2. Չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Մատակարարից վճարելու Պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը,
3. Հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3. Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա՝

1. պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,
2. հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը[1]:

2.1.4. Եթե հանձնվել է Պայմանագրով նախատեսված տեսականուն չհամապատասխանող Ապրանք, ապա

[1]Բոլոր այն դեպքերում երբ Ապրանքը չի կարող ընդունվել Գնորդի կողմից, մասնավորապես՝ թերի մատակարարում, մատակարարվել է ոչ պատշաճ որակի Ապրանք, որը պետք է փոխարինվի Մատակարարի կողմից, մատակարարված Ապրանքի տեսակը և տեխնիկական ցուցանիշները չեն համապատասխանում Պայմանագրով սահմանվածին և այլ նմանօրինակ իրավիճակներում Գնորդի կողմից Մատակարարի նկատմամբ կարող է կիրառվել մատակարարման կետանցի նկատմամբ կիրառվող տույժը, սկսած մատակարարման համար Պայմանագրով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող օրվանից:

1. սահմանել ողջամիտ ժամկետ՝ փոխարինելու Պայմանագրով նախատեսված տեսականուն չհամապատասխանող Ապրանքը Պայմանագրով նախատեսված չափանիշներին համապատասխանող Ապրանքով,
2. հրաժարվել այն ընդունելուց և դրա համար վճարելուց, իսկ եթե վճարել է՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը։

2.1.5. Միակողմանի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին ոչ ուշ, քան 5 (հինգ) օր առաջ գրավոր ծանուցելով Մատակարարին, եթե Մատակարարն էականորեն խախտել է Պայմանագիրը։ Մատակարարի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

1. մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի համապատասխանում Ապրանքի որակի անձնագրում նշված ցուցանիշներին, և որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,
2. Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 (տասնհինգ) աշխատանքային օրից ավելի։

2.2. **Գնորդը պարտավոր է՝**

2.2.1. Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները։

2.2.2. Մատակարարի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Մատակարարին՝ Պայմանագրի վավերապայմաններում նշված հասցեով գրավոր ծանուցում և/կամ էլեկտրոնային հասցեին ծանուցում ուղարկելու միջոցով։

2.2.3. Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Մատակարարին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը։

2.2.4. Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Մատակարարին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ ողջամիտ ժամկետում՝ այն բանից հետո, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից։

2.3. **Մատակարարն իրավունք ունի՝**

2.3.1. Գնորդից պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում, հասցեով և պարբերականությամբ մատակարարված Ապրանքը։

2.3.2. Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները։

2.3.3. Վաղաժամկետ մատակարարել Ապրանքը։

2.4. **Մատակարարը պարտավոր է՝**

2.4.1. Գնորդին հանձնել Պայմանագրով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով, ժամկետներում, հասցեով՝ տրամադրելով նաև Ապրանքի որակը հավաստող փաստաթուղթ-Ապրանքի որակի հավաստագիր։

2.4.2. Ապահովել Ապրանքի մատակարարումը Պայմանագրով սահմանված ժամկետում, կամ անհրաժեշտության դեպքում՝ Պայմանագրի 2.1.2 կետի «2» ենթակետի կամ 2.1.4 կետի «1» ենթակետի համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում։

2.4.3. Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը։

2.4.4. Հետ տանել Գնորդի կողմից Պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Մատակարարին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը։

2.4.5. Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը։

2.4.6. Գնորդին հանձնել Ապրանք՝ նման տեսակի ապրանքների պահպանվածությունն ապահովող եղանակով։

2.4.7. Գնորդին հանձնել Ապրանքի վերաբերյալ համապատասխան փաստաթղթերը։

2.4.8. Պայմանագրի 2.1.5 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները։

2.4.9. Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին։

3. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

3.1. Ապրանքի որակը պետք է համապատասխանի այն նպատակներին, որոնց համար այդ տեսակի Ապրանքը սովորաբար օգտագործվում է:

3.2. Եթե օրենքով սահմանված կարգով նախատեսված են վաճառվող Ապրանքի որակին առաջադրվող պարտադիր պահանջներ՝ ստանդարտներ, ապա Մատակարարը պարտավոր է Գնորդին հանձնել այդ ստանդարտներին համապատասխանող Ապրանք:

3.3. Մատակարարը պարտավորվում է Ապրանքը հանձնելու հետ միաժամանակ Գնորդին հանձնել Ապրանքն արտադրող Ընկերության կողմից տրված որակի հավաստագիր, որը պետք է պարունակի հետևյալ տեղեկատվությունը.

1) արտադրողի անվանումը ,
2) Ապրանքի անվանումը,
3) արտադրման տարին, ամիսը, ամսաթիվը

3.4. Սույն գլխով սահմանված պահանջների չպահպանումը հիմք է մատակարարված Ապրանքը չընդունելու համար։

4. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

4.1. Ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվում Պայմանագրի ստորագրման օրվանից 30 (երեսուն) օրացուցային օր, որի պահպանումը հավաստվում է Մատակարարի կողմից դուրս գրված հաշվարկային փաստաթղթի և Կողմերի լիազորված անձանց կողմից մատակարարված Ապրանքի փոխանցման պահին կազմված արձանագրության ստորագրմամբ:

4.2. Արձանագրության կազմման նպատակն է արձանագրել մատակարարված Ապրանքի համապատասխանությունը Պայմանագրի, մասնավորապես՝ 3. բաժնի պահանջներին։

4.3. Եթե Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պահանջներին, Գնորդը նախաձեռնում է Ապրանքի լաբորատոր փորձաքննություն, որի արդյունքները պետք է ներկայացվեն Մատակարարին 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում: Լաբորատոր փորձաքննության արդյունքներն Ապրանքի հետ ներկայացված որակի անձնագրով ներկայացված ցուցանիշներին համապատասխան լինելու դեպքում Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում կստորագրի Մատակարարի կողմից դուրս գրված հաշվարկային փաստաթուղթը, Ապրանքը կհամարվի ընդունված ողջ ծավալով և ենթակա կլինի վճարման՝ Պայմանագրով սահմանված ժամկետում և չափով։

4.4. Եթե մատակարարված Ապրանքը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա այն չի ընդունվում, արձանագրությունը և հաշվարկային փաստաթուղթը չեն ստորագրվում և Գնորդը՝

1. հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները,
2. Մատակարարի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

4.5. Ապրանքը Մատակարարի կողմից կմատակարարվի Գնորդի պահեստ՝ ՀՀ, ք. Հրազդան, Գործարանային 1:

4.6. Անհրաժեշտության դեպքում Ապրանքի փոխանցմանը կարող են ներգրավվել մասնագիտացված կազմակերպություններ և/կամ առանձին մասնագետներ, որոնց ներկայացրած եզրակացությունները և այլ փաստաթղթերը կցվում են փոխանցման արձանագրությանը և կազմում են դրա անաբաժանելի մասը:

4.7. Մատակարարը պարտավորվում է Ապրանքը հանձնելու հետ միաժամանակ Գնորդին հանձնել Պայմանագրի 3.3 կետում նշված փաստաթուղթը։

4.8. Կողմերը սահմանում են, որ Հավելվածում նշված Ապրանքի քանակը մատակարարման ընթացքում կարող է ճշգրտվել Կողմերի կողմից կազմած հանձնման-ընդունման ակտերի հիման վրա:

4.9. Հավելվածում նշված Ապրանքի փաստացի ընդունված քանակի տարբերությունը թույլատրվում է մինչև 10% (տաս տոկոս), ինչն արձանագրվում է Կողմերի կողմից կազմած հանձնման-ընդունման ակտերում:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ, ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5.1. Պայմանագրի գինը մրցույթային է՝ ծածկագիր ……։ Պայմանագրի գինը՝ մատակարարվող Ապրանքի արժեքը, կազմում է ..... (……) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ:

Փաստացի առաքված Ապրանքի քաշը՝ հաշվարկվում է հետևյալ բանաձևով ՝

P100= (V * ρ) * C/100, որտեղ ՝

- P100 ռեագենտի քաշն է 100%-ոց կոնցենտրացիայի հաշվարկով (կգ),
- V- ստացված ռեագենտի ծավալն է լ (մ3),
- ρ - ռեագենտի խտությունն է 200C ջերմաստիճանի պայմաններում (գ/սմ3),

(Քիմիկ-անալիտիկի տեղեկատու, Մ. 1976թ.)

- C - ստացված ռեագենտի փաստացի կոնցենտրացիան է (%):

(որոշվում է ապրանքի 2184-74 ԳOUS-ի 3.4.3 կետին համապատասխան):

5.2. Գինը ներառում է Մատակարարի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները։

5.3. Ապրանքի գինը կայուն է և Մատակարարն իրավունք չունի պահանջելու ավելացնելու, իսկ Գնորդը՝ նվազեցնելու այն։Կողմերը սահմանում են, որ վճարման ենթակա գումարը կորոշվի մատակարարված Ապրանքի հանձնման-ընդունմանն ուղղված գործողությունների կատարման արդյունքում։

5.4. Կողմերը պայմանավորվում են, որ Գնորդը Մատակարարին վճարման ենթակա գումարը վճարում է Մատակարարին հետևյալ կարգով.

5.4.1. Վճարման ենթակա գումարը Գնորդը վճարում է Մատակարարին Պայմանագրի «4.3» կետով սահմանված լաբորատոր փորձաքննության արդյունքները ստանալու պահից **60** ***(վաթսուն)*** *օրվա* ընթացքում։

5.5. Պայմանագրով սահմանված վճարումները Գնորդի կողմից կատարվում են Մատակարարի՝ Պայմանագրում նշված բանկային հաշվին գումարի փոխանցման միջոցով։

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Մատակարարը պատասխանատվություն է կրում հանձնված Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար։

6.2. Մատակարարի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Մատակարարից կարող է գանձվել տույժ՝ մատակարարման ենթակա Ապրանքի գնի 0.13% (զրո ամբողջ տասներեք հարյուրերորդական տոկոս) չափով՝ կետանցված յուրաքանչյուր օրվա համար, բայց ոչ ավել, քան մատակարարման ենթակա Ապրանքի գինը։

6.3. Պայմանագրի Հավելվածին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր միավոր տարայի համար Մատակարարից կարող է գանձվել տուգանք՝ Պայմանագրի գնի 0.5% չափով։

6.4. Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Մատակարարին վճարման ենթակա գումարների հետ։

6.5. Գնորդի կողմից Պայմանագրի 5.5 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Գնորդից կարող է գանձվել տույժ՝ 0.13% չափով՝ կետանցված յուրաքանչյուր օրվա համար, բայց ոչ ավել, քան Պայմանագրով սահմանված գնի 5%-ը։

6.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով։

6.7. Տույժերի և/կամ տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց։

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն Պայմանագրով և սույն Պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել։ Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը։ Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ

մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին՝ ոչ ուշ, քան 10 (տասը) աշխատանքային օր առաջ:

8. ՀԱՏՈՒԿ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում և դրա պայմանները Կողմերի համար պարտադիր են դառնում սույն Պայմանագրի կնքման (Կողմերի ստորագրման) ամսաթվից և գործում է մինչև Կողմերի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2. Կողմի Պայմանագրից ծագած վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան Կողմի գրավոր համաձայնության:

8.3. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով ՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

8.4. Պայմանագիրը կարող է լրացվել և/կամ փոփոխվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող համաձայնագրի կնքման միջոցով:

8.5. Կողմերը ստանձնում են Պայմանագրի հետ կապված մի Կողմից մյուս Կողմին ուղղակի կամ միջնորդավորված կերպով տրամադրված ցանկացած տեղեկատվության և փաստաթղթերի չհրապարակման պարտավորություն՝ անկախ նրանից, թե երբ է այդպիսի տեղեկատվությունը տրամադրվել՝ մինչև Պայմանագրի գործողության ժամկետի լրանալը, թե՝ լրանալուց հետո: Տեղեկատվության չհրապարակման պարտավորությունը չի տարածվում հանրամատչելի տեղեկատվության, ինչպես նաև այն տեղեկատվության վրա, որը հայտնի կդառնա Պայմանադիր Կողմի մեղքի բացակայության պայմաններում:

8.6. Պայմանագրի կատարման շրջանակներում Գնորդին ներկայացնելու և Ապրանքի հանձնման-ընդունման գործընթացն իրականացնելու, հանձնման-ընդունման ակտերը, Ապրանքի փոխանցման արձանագրություն ստորագերլու նպատակով Գնորդը նշանակում է «ՀրազՋԷԿ» ԲԲԸ քիմիական արտադրամասի պետ՝ Ա.Խաչատրյանին:

8.7. Սույն Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակներից՝ մեկական օրինակ Կողմերի համար:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գնորդ	Մատակարար
«Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ	**«……» ……**
Հասցե՝ ՀՀ, 2302, ք. Հրազդան, Գործարանային փողոց 1	Հասցե՝ ք……, ……
ՀՎՀՀ՝ 03015742	ՀՎՀՀ՝ ……
«Ամերիաբանկ» ՓԲԸ	Հ/հ ……
Հ/Հ՝ 15700-04334980100	«……բանկ» ……

e-mail: info@raztes.am

Գլխավոր տնօրեն

Ս. Կարայան

e-mail: ……
Հեռ: +……

Տնօրեն

……

Հավելված № 1
« _____ » _____ 2026թ. կնքված թիվ _____Պայմանագրի

ՑԱՆԿ
պայմանագրով մատակարարվող Ապրանքի

№	Անվանումը	Չափման միավոր	Քանակը	Տեսակը	Միավորի գինը, ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ	Ընդհանուր գինը, ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ
1.	2.	3.	4.	5.	6.	7.
1.						
2.						
3.	Ընդամենը					

Գնորդ

«Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ
Հասցե՝ ՀՀ, 2302, ք. Հրազդան, Գործարանային փողոց 1

ՀՎՀՀ՝ 03015742
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 15700-04334980100
e-mail: info@raztes.am

Գլխավոր տնօրեն

Մատակարար

«……» ……
Հասցե՝ ք……, ……

ՀՎՀՀ՝ ……
Հ/h ……
«……բանկ» ……
e-mail: ……
Հեռ: +……

Տնօրեն

Մ. Կարայան .....

Ձև N 1
ծածկագրով
Գնանաշման հարցման հրավերի

ԴԻՄՈՒՄՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Գնանաշման հարցմանն մասնակցելու

_____ հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել
մասնակցի անվանումը

_____-ի կողմից_-----ծածկագրով հայտարարված
պատվիրատուի անվանումը

Գնանաշման հարցման _____ չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

_____-ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է
մասնակցի անվանումը

_____ռեզիդենտ:
երկրի անվանումը

_____-ի՝
մասնակցի անվանումը

- հարկ վճարողի հաշվառման համարն է՝ _____:
  հարկի վճարողի հաշվառման համարը

- էլեկտրոնային փոստի հասցեն է՝ _____:
  էլեկտրոնային փոստի հասցեն

- գործունեության հասցեն է՝ ----------:

գործունեության հասցեն

- հեռախոսահամարն է՝ ----------:

հեռախոսի համարը

Սույնով _____-ն հայտարարում և հավաստում է, որ՝

մասնակցի անվանում

1) _____-ն և իրեն փոխկապակցված անձինք

մասնակցի անվանում

բավարարում են ծածկագրով Գնանաշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և _____-ն պարտավորվում է

մասնակցի անվանում

ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում [2].

2) ծածկագրով Գնանաշման հարցմանն մասնակցելու շրջանակում՝

- թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու անբարեխիղճ մրցակցություն, գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,
- բացակայում է հրավերով սահմանված՝ _____-ին

մասնակցի անվանումը

փոխկապակցված անձանց և (կամ) _____-ի

մասնակցի անվանումը

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս _____-ին

մասնակցի անվանումը

պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք:

_____ _____

Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը)

_____

Ч. S.[3]

Ձև N 2

ծածկագրով
Գնանաշման հարցման հրավերի

ՆԿԱՐԱԳԻՐ
առաջարկվող ապրանքի ամբողջական

_____-ն
մասնակցի անվանումը

ծածկագրով Գնանաշման հարցման շրջանակում ըստ չափաբաժինների ստորև ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	**Առաջարկվող ապրանքի**				
	ֆիրմային անվանումը	**ապրանքային նշանը**	**մոդելը**	**արտադրողի անվանումը**	**տեխնիկական բնութագրերը**

_____ _____
մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրություն

Կ. Տ.

Ձև 3.1
ծածկագրով

ՁԵՎ

ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ

1. Կազմակերպությունը

1.1. Կազմակերպության տվյալները

1.1.1. Անվանումը	
1.1.2. Անվանումը լատինատառ	
1.1.3. Պետական գրանցման համարը	
1.1.4. Գրանցման օրը, ամիսը, տարին	
1.1.5. Գրանցման հասցեն	
1.1.6. Գրանցման պետությունը	
1.1.7. Գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը	

1.2. Հայտարարագիրը ներկայացնող անձը

1.2.1. Հայտարարագիրը ներկայացնող անձի անունը և ազգանունը	
1.2.2. Հայտարարագիրը ներկայացնող անձի պաշտոնը	

1.3. Հայտարարագրի ներկայացումը

1.3.1. Հայտարարագրի ստորագրման օրը, ամիսը, տարին	
1.3.2. Հայտարարագրի էջերի քանակը	
1.3.3. Հայտարարագիրը ներկայացնող անձի ստորագրությունը	

2. Բաժնետոմսերի ցուցակման տվյալները

2.1. Բաժնետոմսերի ցուցակման տվյալները

2.1.1. Ֆոնդային բորսայի անվանումը	
2.1.2. Հղումը բորսայում առկա փաստաթղթերին	

2.2. Կազմակերպությունը վերահսկող իրավաբանական անձի տվյալները

2.2.1. Անվանումը	
2.2.2. Անվանումը լատինատառ	
2.2.3. Պետական գրանցման համարը	
2.2.4. Գրանցման օրը, ամիսը, տարին	
2.2.5. Գրանցման հասցեն	
2.2.6. Գրանցման պետությունը	
2.2.7. Գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը	

2.3. Վերահսկողության մակարդակը

2.3.1. Մասնակցության չափը (%)	
2.3.2. Մասնակցության տեսակը	☐ Ուղղակի մասնակցություն ☐ Անուղղակի մասնակցություն

3. Պետության, համայնքի կամ միջազգային կազմակերպության մասնակցությունը

3.1. Պետության կամ համայնքի մասնակցությունը

3.1.1. Պետության անվանումը	
3.1.2. Համայնքի անվանումը	
3.1.3. Մասնակցության չափը (%)	
3.1.4. Մասնակցության տեսակը	☐ Ուղղակի մասնակցություն ☐ Անուղղակի մասնակցություն

3.2. Միջազգային կազմակերպության մասնակցությունը

3.2.1. Միջազգային կազմակերպության անվանումը	
3.2.2. Միջազգային կազմակերպության անվանումը լատինատառ	
3.2.3. Մասնակցության չափը (%)	
3.2.4. Մասնակցության տեսակը	☐ Ուղղակի մասնակցություն ☐ Անուղղակի մասնակցություն

4. Իրական շահառուի տվյալները

4.1. Անձի ինքնությունը հավաստող տվյալները

4.1.1. Անունը	
4.1.2. Ազգանունը	
4.1.3. Անունը (լատինատառ)	
4.1.4. Ազգանունը (լատինատառ)	
4.1.5. Քաղաքացիությունը	
4.1.6. Ծննդյան օրը, ամիսը, տարին	

4.2. Անձը հաստատող փաստաթուղթը

4.2.1. Փաստաթղթի տեսակը	
4.2.2. Փաստաթղթի համարը	
4.2.3. Տրամադրման օրը, ամիսը, տարին	
4.2.4. Տրամադրող մարմինը	
4.2.5. ՀԾՀ կամ համարժեք համարը	

4.3. Անձի հաշվառման հասցեն

4.3.1. Պետությունը	
4.3.2. Համայնքը	
4.3.3. Վարչատարածքային միավորը	
4.3.4. Փողոցի անվանումը, շենքը (տունը), բնակարանը	

4.4. Անձի բնակության հասցեն

4.4.1. Պետությունը	
4.4.2. Համայնքը	
4.4.3. Վարչատարածքային միավորը	
4.4.4. Փողոցի անվանումը, շենքը (տունը), բնակարանը	

4.5. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (բացառությամբ՝ ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների)

☐ ա. ուղղակի կամ անուղղակի տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 20 և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 20 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում	
4.5.1. Մասնակցության չափը (%)	
4.5.2. Մասնակցության տեսակը	☐ Ուղղակի մասնակցություն ☐ Անուղղակի մասնակցություն
☐ բ. տվյալ իրավաբանական անձի նկատմամբ իրականացնում է իրական (փաստացի) վերահսկողություն այլ միջոցներով	
☐ գ. հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ «ա» և «բ» կետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ	

4.6. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների համար)

☐ ա. ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 10 և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 10 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում	
4.6.1. Մասնակցության չափը (%)	
4.6.2. Մասնակցության տեսակը	☐ Ուղղակի մասնակցություն ☐ Անուղղակի մասնակցություն
☐ բ. իրավունք ունի նշանակելու կամ հեռացնելու իրավաբանական անձի կառավարման մարմինների անդամների մեծամասնությանը	
☐ գ. իրավաբանական անձից անհատույց ստացել է հաշվետու տարվան նախորդող տարվա ընթացքում տվյալ իրավաբանական անձի ստացած շահույթի առնվազն 15 տոկոսի չափով օգուտ	
☐ դ. իրավաբանական անձի նկատմամբ իրականացնում է իրական (փաստացի) վերահսկողություն այլ միջոցներով	
☐ ե. հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ «ա»-«դ» կետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ	

4.7. Իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունները

4.7.1. Իրական շահառու դառնալու օրը, ամիսը, տարին	
4.7.2. Կազմակերպության նկատմամբ	☐ Առանձին ☐ Փոխկապակցված անձանց հետ համատեղ

վերահսկողության իրականացումը	
4.7.3. Ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպության իրական շահառուն հանդիսանում է պաշտոնատար անձ կամ նրա ընտանիքի անդամ	☐ Այո ☐ Ոչ

4.8. Իրական շահառուի կոնտակտային տվյալները

4.8.1. Էլ. փոստի հասցեն	
4.8.2. Հեռախոսահամարը	

5. Միջանկյալ իրավաբանական անձինք

5.1. Կազմակերպության տվյալները

5.1.1. Անվանումը	
5.1.2. Անվանումը լատինատառ	
5.1.3. Պետական գրանցման համարը	
5.1.4. Գրանցման օրը, ամիսը, տարին	
5.1.5. Գրանցման հասցեն	
5.1.6. Գրանցման պետությունը	
5.1.7. Գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը	

5.2. Իրական շահառուի տվյալները

5.2.1. Իրական շահառու(ներ)ի անունը և ազգանունը, ում համար կազմակերպությունը հանդիսանում է միջանկյալ իրավաբանական անձ	

5.3. Միջանկյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի ցուցակման տվյալները

5.3.1. Ֆոնդային բորսայի անվանումը	
5.3.2. Հղումը բորսայում առկա փաստաթղթերին	

6. Լրացուցիչ նշումներ

Լրացուցիչ տեղեկություններ կամ հավելյալ պարզաբանումներ, որոնք առնչվում են հայտարարագրում լրացված կամ լրացման ենթակա տվյալներին

I. Հայտարարագրի լրացման կարգը

1. Հայտարարագրի 1-ին բաժնում (Կազմակերպությունը) լրացվում են հայտարարագիր ներկայացնող իրավաբանական անձի (այսուհետ՝ Կազմակերպություն) տվյալները: Այս բաժնում ենթաբաժինները լրացվում են հետևյալ կանոններով.
   1) «Կազմակերպության տվյալները» ենթաբաժնում լրացվում են Կազմակերպության անվանումը (այդ թվում՝ լատինատառ) և պետական գրանցման տվյալները՝ ներառյալ նշում կազմակերպաիրավական ձևի մասին.
   2) «Հայտարարագիրը ներկայացնող անձը» ենթաբաժնում լրացվում է այն ֆիզիկական անձի տվյալները ով ստորագրում է սույն ընթացակարգի հայտում ներառվող փաստաթղթերը.
   3) «Հայտարարագրի ներկայացումը» ենթաբաժնում լրացվում են հայտարարագրի ստորագրման օրը, ամիսը, տարին, հայտարարագրի էջերի քանակը, ինչպես նաև դրվում է հայտարարագիրը ներկայացնող անձի ստորագրությունը:

2. Հայտարարագրի 2-րդ բաժինը (Բաժնետոմսերի ցուցակման տվյալները) լրացվում է, եթե Կազմակերպության կամ Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող այլ իրավաբանական անձի բաժնետոմսերը ցուցակված են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից հաստատված՝ իրական շահառուների համարժեք բացահայտման չափանիշներով կարգավորվող շուկաների ցանկում ներառված շուկայում: Նշված չափանիշներին համապատասխանելու դեպքում այս բաժինը լրացվում է Կազմակերպության կամ Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող այլ իրավաբանական անձի համար: Այս բաժինը լրացնելու դեպքում հայտարարագրի հաջորդ բաժինները ենթակա չեն լրացման, բացառությամբ 5-րդ բաժնի, որը լրացվում է, եթե Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող իրավաբանական անձը Կազմակերպության կանոնադրական կապիտալում ունի անուղղակի մասնակցություն: Այս բաժնում ենթաբաժինները լրացվում են հետևյալ կանոններով.
   1) «Բաժնետոմսերի ցուցակման տվյալները» ենթաբաժնում լրացվում է ֆոնդային բորսայի անվանումը՝ փակագծերում նշելով նաև բորսայի ծածկագիրը (Market Identifier Code), որտեղ ցուցակված են Կազմակերպության կամ Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող այլ իրավաբանական անձի բաժնետոմսերը, ինչպես նաև կատարվում է հղում բորսայում առկա փաստաթղթերին՝ առկայության դեպքում այն փաստաթղթերին, որոնք պարունակում են տեղեկություններ տվյալ իրավաբանական անձի սեփականատերերի վերաբերյալ.
   2) «Կազմակերպությունը վերահսկող իրավաբանական անձի տվյալները» ենթաբաժինը լրացվում է, եթե հայտարարագրի 2.1-ին ենթաբաժնում լրացված տվյալները վերաբերում են ոչ թե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձին, այլ Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող այլ իրավաբանական անձի: Այս ենթաբաժնում լրացվում են Կազմակերպությունը վերահսկող իրավաբանական անձի անվանումը (այդ թվում՝ լատինատառ) և գրանցման տվյալները՝ ներառյալ նշում կազմակերպաիրավական ձևի մասին, ինչպես նաև գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը.
   3) «Վերահսկողության մակարդակը» ենթաբաժինը լրացվում է, եթե հայտարարագրի 2.1-ին ենթաբաժնում լրացվել են Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող իրավաբանական անձին

վերաբերող տվյալները: Այս ենթաբաժնում նշվում է Կազմակերպության կանոնադրական կապիտալում Կազմակերպությունը վերահսկող իրավաբանական անձի մասնակցության չափը՝ տոկոսային արտահայտմամբ, ինչպես նաև մասնակցության տեսակը: Կանոնադրական կապիտալում մասնակցության չափի և տեսակի վերաբերյալ նշումները կատարվում են սույն կարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված կանոնների հաշվառմամբ:

3. Հայտարարագրի 3-րդ բաժինը (Պետության, համայնքի կամ միջազգային կազմակերպության մասնակցությունը) լրացվում է, եթե Կազմակերպության կանոնադրական կապիտալում ուղղակի կամ անուղղակի մասնակցություն ունի որևէ պետություն, համայնք կամ միջազգային կազմակերպություն: Բաժինը կարող է լրացվել մի քանի անգամ, եթե Կազմակերպության կանոնադրական կապիտալում ուղղակի կամ անուղղակի մասնակցություն ունեն մի քանի պետություն, համայնք կամ միջազգային կազմակերպություն: Այս բաժնում ենթաբաժինները լրացվում են հետևյալ կանոններով.

1) «Պետության կամ համայնքի մասնակցությունը» ենթաբաժինը լրացվում է, եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում առկա է պետության կամ համայնքի ուղղակի կամ անուղղակի մասնակցություն: Պետության մասնակցության դեպքում այս ենթաբաժնում լրացվում է պետության, իսկ համայնքի մասնակցության դեպքում՝ նաև համայնքի անվանումը: Այս ենթաբաժնում լրացվում են նաև իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում պետության կամ համայնքի մասնակցության չափը՝ տոկոսային արտահայտմամբ, ինչպես նաև մասնակցության տեսակը: Կանոնադրական կապիտալում մասնակցության չափի և տեսակի վերաբերյալ նշումները կատարվում են սույն կարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված կանոնների հաշվառմամբ.

2) «Միջազգային կազմակերպության մասնակցությունը» ենթաբաժինը լրացվում է, եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում առկա է միջազգային կազմակերպության ուղղակի կամ անուղղակի մասնակցություն: Այս ենթաբաժնում լրացվում են միջազգային կազմակերպության անվանումը (այդ թվում՝ լատինատառ), իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում միջազգային կազմակերպության մասնակցության չափը՝ տոկոսային արտահայտմամբ, ինչպես նաև մասնակցության տեսակը: Կանոնադրական կապիտալում մասնակցության չափի և տեսակի վերաբերյալ նշումները կատարվում են սույն կարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված կանոնների հաշվառմամբ:

4. Հայտարարագրի 4-րդ բաժինը (Իրական շահառուի տվյալները) լրացվում է յուրաքանչյուր իրական շահառուի համար առանձին՝ Կազմակերպության իրական շահառուների քանակով: Այս բաժնում ենթաբաժինները լրացվում են հետևյալ կանոններով.

1) «Անձի ինքնությունը հավաստող տվյալները» ենթաբաժնում լրացվում են իրական շահառուի անձնական տվյալները: Տվյալները լրացվում են այնպես, ինչպես դրանք լրացված են իրական շահառուի անձը հաստատող փաստաթղթում: Եթե անձի անունը և ազգանունը հայերեն կամ լատինատառ առկա չեն վերջինիս անձը հաստատող փաստաթղթում, ապա հայտարարագրում լրացվում է դրանց տառադարձությունը.

2) «Անձը հաստատող փաստաթուղթը» ենթաբաժնում լրացվում են տեղեկությունների իրական շահառուի անձը հաստատող փաստաթղթի վերաբերյալ.

3) «Անձի հաշվառման հասցեն» ենթաբաժնում լրացվում է իրական շահառուի հաշվառման վայրի հասցեն.

4) «Անձի բնակության հասցեն» ենթաբաժինը լրացվում է, եթե իրական շահառուի հաշվառման հասցեն տարբերվում է վերջինիս բնակության հասցեից: Այս ենթաբաժնում լրացվում է իրական շահառուի բնակության վայրի հասցեն.

5) «Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (բացառությամբ ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների)» ենթաբաժինը լրացվում է, եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձը չի հանդիսանում ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպություն: Այս ենթաբաժնում նշվում է, թե «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի» մասին օրենքով նախատեսված որ հիմք(եր)ով է անձը հանդիսանում Կազմակերպության իրական շահառու, և ներառվում են այդ հիմքերի առնչությամբ պահանջվող տեղեկությունները: Մեկից ավելի հիմքերով իրական շահառու հանդիսանալու դեպքում նշում է կատարվում բոլոր հիմքերի մասով՝ համապատասխան կետերում: Այս ենթաբաժնում հիմքերի վերաբերյալ տվյալները լրացվում են հետևյալ կանոններով.

ա. Այս ենթաբաժնի «**ա**» կետում կատարվում է նշում, եթե ֆիզիկական անձը ուղղակի կամ անուղղակի տիրապետում է Կազմակերպության՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 20 և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 20 և ավելի տոկոս մասնակցություն Կազմակերպության կանոնադրական կապիտալում: Մասնակցությունը կարող է լինել Կազմակերպության բաժնեմասը (բաժնետոմսը, փայը) սեփականության իրավունքով տիրապետելու ուժով (ուղղակի մասնակցություն) կամ Կազմակերպության բաժնեմասին (բաժնետոմսին, փային) տիրապետող այլ իրավաբանական անձի բաժնեմասը (բաժնետոմսը, փայը) սեփականության իրավունքով տիրապետելու ուժով (անուղղակի մասնակցություն): Անուղղակի մասնակցությունը կարող է իրականացվել անկախ ֆիզիկական անձի և Կազմակերպության բաժնեմասը (բաժնետոմսը, փայը) տիրապետող իրավաբանական անձի շղթայում առկա միջանկյալ իրավաբանական անձանց քանակից: «Մասնակցության չափը» դաշտում նշվում է Կազմակերպության կանոնադրական կապիտալում մասնակցության չափը՝ տոկոսային արտահայտմամբ: Մասնակցության չափը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով իրական շահառուի ուղղակի և անուղղակի մասնակցության արդյունքում Կազմակերպության կանոնադրական կապիտալում մասնակցության բոլոր տոկոսների հանրագումարը: Անուղղակի մասնակցության դեպքում, կազմակերպության կանոնադրական կապիտալում իրական շահառուի մասնակցությունը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր նախորդ միջանկյալ կազմակերպության մասնակցության չափը, այն է՝ Կազմակերպության մասնակից իրավաբանական անձի՝ տոկոսային արտահայտմամբ մասնակցության չափը բազմապատկելով Կազմակերպության մասնակից իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համապատասխան մասնակցի՝ տոկոսային արտահայտմամբ մասնակցության չափով, և այդպես շարունակ մինչև իրական շահառուին հասնելը: «Մասնակցության տեսակը» դաշտում կատարվում է նշում կանոնադրական կապիտալում մասնակցության ուղղակի կամ անուղղակի լինելու մասին: Կանոնադրական կապիտալում և՛ ուղղակի, և՛ անուղղակի մասնակցության առկայության դեպքում նշում է կատարվում միաժամանակ և՛ ուղղակի, և՛ անուղղակի մասնակցության առկայության վերաբերյալ.

բ. Այս ենթաբաժնի «**բ**» կետում կատարվում է նշում, եթե անձն «ա» կետի իմաստով չի հանդիսանում կազմակերպության իրական շահառու, սակայն վերահսկում է Կազմակերպությունը՝ իրավական գործիքների (այդ թվում՝ կնքված գործարքների) ուժով, այլ բնույթի անձնական ազդեցության հիման վրա կամ այլ միջոցներով.

գ. Այս ենթաբաժնի «**գ**» կետում կատարվում է նշում, եթե անձը հանդիսանում է Կազմակերպության գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն

դեպքում, երբ առկա չէ այս ենթաբաժնի «ա» և «բ» կետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ.

6) «Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների համար)» ենթաբաժինը լրացվում է, եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձը հանդիսանում է ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպություն: Իրական շահառուների բացահայտումն իրականացվում է Ընդերքի մասին օրենսգրքով սահմանված չափանիշներով: Այս ենթաբաժնում նշումները կատարվում են սույն կարգի 4.5-րդ կետում սահմանված կանոնների հաշվառմամբ: Այս ենթաբաժնում հիմքերի վերաբերյալ տվյալները լրացվում են հետևյալ կանոններով.

ա. Այս ենթաբաժնի «**ա**» կետում կատարվում է նշում, եթե ֆիզիկական անձը ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 10 և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 10 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում: Այս ենթաբաժինը լրացվում է սույն կարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված կանոնների հաշվառմամբ.

բ. Այս ենթաբաժնի «**բ**» կետում կատարվում է նշում, եթե անձն իրավունք ունի նշանակելու կամ հեռացնելու իրավաբանական անձի կառավարման մարմինների անդամների մեծամասնությանը.

գ. Այս ենթաբաժնի «**գ**» կետում կատարվում է նշում, եթե անձը Կազմակերպությունից անհատույց ստացել է հաշվետու տարվան նախորդող տարվա ընթացքում տվյալ իրավաբանական անձի ստացած շահույթի առնվազն 15 տոկոսի չափով օգուտ.

դ. Այս ենթաբաժնի «**դ**» կետում կատարվում է նշում, եթե անձն «ա»-«գ» կետերի իմաստով չի հանդիսանում Կազմակերպության իրական շահառու, սակայն վերահսկում է կազմակերպությունը՝ իրավական գործիքների (այդ թվում՝ կնքված գործարքների) ուժով, այլ բնույթի անձնական ազդեցության հիման վրա կամ այլ միջոցներով.

ե. Այս ենթաբաժնի «**ե**» կետում կատարվում է նշում, եթե անձը հանդիսանում է Կազմակերպության գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ այս ենթաբաժնի «ա»-«դ» կետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ.

7) «Իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունները» ենթաբաժնում լրացվում են անձի՝ Կազմակերպության իրական շահառու դառնալու օրը, ամիսը, տարին: Այս ենթաբաժնում կատարվում է նշում իրական շահառուի կողմից Կազմակերպության նկատմամբ վերահսկողության իրականացման ձևի վերաբերյալ: Փոխկապակցված անձանց հետ համատեղ վերահսկողության իրականացման վերաբերյալ կատարվում է նշում, եթե իրական շահառուն Կազմակերպությունը վերահսկում է իր հետ փոխկապակցված անձի հետ համաձայնեցված գործելու ուժով կամ կարող է այն վերահսկել իր հետ փոխկապակցված անձի հետ համաձայնեցված գործելու դեպքում: Եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձը հանդիսանում է ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպություն, այս ենթաբաժնում նաև կատարվում է նշում իրական շահառուի՝ Ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 53-րդ կետի իմաստով պաշտոնատար անձ կամ նրա ընտանիքի անդամ հանդիսանալու վերաբերյալ.

8) «Իրական շահառուի կոնտակտային տվյալները» ենթաբաժնում լրացվում են իրական շահառուի էլեկտրոնային փոստի հասցեն և հեռախոսահամարը:

5. Հայտարարագրի 5-րդ բաժինը (Միջանկյալ իրավաբանական անձինք) լրացվում է, եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձի իրական շահառուն կամ Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող իրավաբանական անձն ունի անուղղակի մասնակցություն Կազմակերպության կանոնադրական կապիտալում: Այս բաժինը ենթակա է լրացման յուրաքանչյուր միջանկյալ իրավաբանական անձի համար առանձին՝ բոլոր միջանկյալ իրավաբանական անձանց քանակով: Այս բաժնում ենթաբաժինները լրացվում են հետևյալ կանոններով.

1) «Կազմակերպության տվյալները» ենթաբաժնում լրացվում են միջանկյալ իրավաբանական անձի անվանումը (այդ թվում՝ լատինատառ) և գրանցման տվյալները՝ ներառյալ նշում կազմակերպաիրավական ձևի մասին.

2) «Իրական շահառուի տվյալները» ենթաբաժնում լրացվում են այն իրական շահառու(ներ)ի անունը և ազգանունը, ում համար այս ենթաբաժնում լրացված կազմակերպությունը հանդիսանում է միջանկյալ իրավաբանական անձ: Եթե միջանկյալ իրավաբանական անձանց տվյալները լրացվում են Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող իրավաբանական անձի համար, այս ենթաբաժինը ենթակա չէ լրացման:

3) «Միջանկյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի ցուցակման տվյալները» ենթաբաժինը ենթակա չէ պարտադիր լրացման: Այս ենթաբաժինը կարող է լրացվել, եթե միջանկյալ իրավաբանական անձի բաժնետոմսերը ցուցակված են կարգավորվող շուկայում: Այս ենթաբաժնում լրացվում է ֆոնդային բորսայի անվանումը՝ փակագծերում նշելով նաև բորսայի ծածկագիրը (Market Identifier Code), որտեղ ցուցակված են իրավաբանական անձի բաժնետոմսերը, ինչպես նաև կատարվում է հղում բորսայում առկա փաստաթղթերին:

6. Հայտարարագրի 6-րդ բաժինը (Լրացուցիչ նշումներ) լրացվում է, եթե առկա են լրացուցիչ տեղեկություններ կամ հավելյալ պարզաբանումներ, որոնք առնչվում են հայտարարագրում լրացված կամ լրացման ենթակա տվյալներին: Այս ենթաբաժնում կարող են լրացվել հավելյալ պարզաբանումներ իրական շահառուի կողմից Կազմակերպությունը վերահսկելու հիմքերի վերաբերյալ, պետության (համայնքի) այն մարմինների վերաբերյալ, որոնք իրականացնում են Կազմակերպության վերահսկողությունն այն դեպքում, եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում առկա է պետության կամ համայնքի ուղղակի կամ անուղղակի մասնակցություն, և այլ պարազաբանումներ հայտարարագրի առնչությամբ:

7. Հայտարարագիրը լրացնում և ստորագրում է հայտը ներկայացնող անձը:

ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ

Ստորև ներկայացվում է _____-ի իրական շահառուների վերաբերյալ
մասնակցի անվանումը

տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝ ----------

_____ _____
Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը)

Կ. Տ.

Ձև 4
ծածկագրով
Գնանաշման հարցման հրավերի

ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով ծածկագրով Գնանաշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____-ն առաջարկում է
մասնակցի անվանումը

պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

Չափա-բաժինների համարները	**Ապրանքի անվանումը**	**Արժեք** (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) **/տառերով և թվերով/**	**ԱԱՀ /տառերով և թվերով/**	**Ընդհանուր գինը /տառերով և թվերով/**
1	**2**	**3**	**4**	**5=3+4**
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>			
2	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>>			
3	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N3>>			
…	…			
…	…			

_____ _____
մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ. Տ.[4]

_____